Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.13/[49920]-10

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 24-ԻՆ ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Հրավիրվածներ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Աղաջանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Անանյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոնե պետական հիմնարկի տնօրեն

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 1-ին փուլի շինարարական աշխատանքների վերահսկողության, 2-րդ և 3-րդ փուլերի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում խորհրդատվական ծառայությունների գնման մրցույթի արդյունքների հաստատում

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 1-ին փուլի շինարարական աշխատանքների վերահսկողության, 2-րդ և 3-րդ փուլերի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում խորհրդատվական ծառայությունների գնման մրցույթի արդյունքները.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 1-ին փուլի շինարարական աշխատանքների վերահսկողության, 2-րդ և 3-րդ փուլերի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում խորհրդատվական ծառայությունների գնման մրցույթի արդյունքների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել 2010 թվականի սեպտեմբերի 24-ին ժամը 11:00-ին կայանալիք ՀՀ կառավարության նիստի քննարկմանը։

2. Երևանի քաղաքային տրանսպորտի կայուն զարգացման ներդրումային ծրագրի հետագա ընթացքի մասին

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝

1) մանրակրկիտ ուսումնասիրել 300.0 մլն ԱՄՆ-ի դոլարի վարկային միջոցների տրամադրման ծրագիրը, որտեղ ՀՀ կառավարությունը համապետական ճանապարհների մասով կստանձնի մինչև 30 տոկոս գումարի չափով պարտավորություն.

2) Երևանի քաղաքային տրանսպորտի կայուն զարգացման ներդրումային ծրագիրը քննարկել նաև ԱԶԲ-ի կողմից իրականացվող ռազմավարական ծրգրի շրջանակներում.

3) տարածքային համաչափ զարգացման հայեցակարգին համահունչ լինելու նպատակով խորհրդի կազմում ընդգրկել նաև այն համայնքների ղեկավարներին, որոնց տարածքներում կատարվելու են շինարարական աշխատանքները.

4) շինարարական աշխատանքների իրականացումը նախատեսել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակեր-պությունե ՊՈԱԿ-ի միջոցով.

5) ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Ա. Նռանյանին ներկայացնել միջազգային խորհրդատվա-կան խմբի կողմից ներկայացված հաշվետվությունը.

6) բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանի, մասնակցությամբ հարցը լրացուցիչ քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ